



Երևան, 22 Յունի, 2020

## ՏԵՐՈՒԹԱԿԱՆ ԱՊՈՔ

(Միասնաբար արտասանուած)

Իմասպութիւն Հօր Յիսուս, փուր ինձ իմասպութիւն վեարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 75

ԱՍՏՈՒԱԾ Է ԱՇԽԱՋՐՀԻ ԴԱՏԱԽՈՐԾ

Գոհութիւն կը յայփնենք քեզի, ո՞վ Ասպուած,  
կը հոչակենք քու անունդ, եւ կը պալմենք սքանչելի գործերդ:  
«Երբոր որոշած ժամանակս գայ,  
եւ արդարութեամբ պիտի դապեմ, կ'ըսէ Ասպուած:  
Երբ աշխարհը եւ անոր բնակիչները սասանին,  
ես հասպարուն պիտի պահեմ երկրին հիմերը:  
Սնապարծներուն կ'ըսեմ. - "կը բաւէ պարծենաք".  
ամբարիշփներուն կ'ըսեմ. - "կը բաւէ հպարփանաք,  
դադրեցուցէք ձեր ամբարփաւանութիւնը, գոռոզութեամբ մի՛ խօսիք"»:  
Արդարեւ դապասպանը ոչ արեւելքէն կու գայ,  
ոչ արեւմուփքէն, ոչ հարաւէն, ոչ ալ հիւսիսէն.  
այլ՝ Ասպուած է դապաւորը, որ մէկը կը խոնարհեցնէ ու միւսը կը բարձրացնէ:  
Որովհետեւ Տիրոջ ձեռքին բաժակ մը կայ՝ բարկութեան թունդ զինիով լեցուն.  
այդ բաժակէն խմել կու դայ երկրի բոլոր ամբարիշփներուն,  
որոնք զայն պիտի քամեն իր մրուրով միասին:  
Գալով ինձի, ես յաւիպեան պիտի ցնծամ,  
երգով պիտի ներբողես մեր հայրերուն Ասպուածը:  
Ամբարիշփները իրենց ամրոջ հպարփութեամբ պիտի խորփակուին,  
մինչ արդարները զօրութենէ զօրութիւն պիտի բարձրանան:

## ՃԱՐԱԿԱՆ-ԱՊՈՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վահանասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, նսջեցելոց արքայութիւն:

Արի Վաստած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,  
ազ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի զիշերի,  
ի նստիլ ի տան, ի զնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՝ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

**ՕՐՈՒԱՆ ՆԻՒԹԸ**  
ՀՅԴ  
**ՄԱՐԳԱՐԵՌՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ**  
44 ԳԼՈՒԽ

**ԱՍՏՈՒԺՈՅ ՊԱՏԳԱՄԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԻՄՐԱՅԵԼԱՑԻՆԵՐՈՒՆ (44:1-30)**

Շարունակելով նիւթը, 44րդ գլուխը մեզի կը ներկայացնէ, թէ ինչպէս Խրայէի մնացորդացը կը խոսքանայ Ասքուծոյ հնազանդ ըլլալ: Հակառակ այս խոսքումին, սակայն, անոնք արդէն կը ծրագրեն Եգիպտոս երթալ, որպէս աւելի ապահով երկիր: Ահա այս կացութեան դիմաց, Տէրը Երեմիայի ճամբով պատգամ կը փոխանցէ ըսելով, թէ ինչ կը սպասուին Եգիպտոսի մէջ եւս: Այն ինչ որ պատգաեցաւ Խրայէի մէջ, նոյնը պիտի պատգահի Եգիպտոսի մէջ: Տէրը այս պատգամները կը փոխանցէ, մի գուցէ Եգիպտոսի մէջ եւս մարդիկ իրենց ականչները խոնարհեցնեն լսելու եւ ապաշխարութեամբ դարձի գալու: Տէրը անգամ մը եւս կը յիշեցնէ, թէ ինչ որ պատգաեցաւ Յուղայի երկրին մէջ պարզապէս կողորոշ մը չէր, պարզապէս Նարուգործնոսոր թագաւորին ծրագիրը չէր, այլ՝ իրենց չարութեան արդինքը, ուրիշ ասպուածներու երեւէ երթալը, ու անոնց խունկ ծխելը: Եթէ Տէրը կարփօնէ որ այս բաները պատգահին, խորքին մէջ առիթներ են, որ Տէրը կու գայ մարդուն, որպէսզի մարդը, այս պարզապէս մեղաւոր մարդը, զգասպութեան, արթնութեան իրաւիրուի, դարձի գայ, որպէսզի Տէրը փրկէ զինք:

Առաւել եւս, երբ Տէրը ուզեց որ մնացորդը մնայ Յուղայի քաղաքի մէջ, եւ անոնք մերժեցին մնալ, այլ՝ ծրագրեցին Եգիպտոս երթալ: Երեւոյթ մը, որ ըսել կ'ուզէ մենք չենք վսպահիր Ասքուծոյ ու Անոր խօսքին: Որովհեքի երբ Տէրը հրամայեց հոն մնալ եւ զիրենք պիտի ազագէ, անոնք սակայն սկսան մրածել երթալու Եգիպտոս, որպէս աւելի ապահով դեղ իրենց համար: Տէրը, սակայն, հոն ալ զիրենք պիտի պարզէ իրենց անհնազանդութեան պատճառով:

Այս հագուածը այսօր կու գայ մեզի սորվեցնելու եւ ցոյց գալու, Ասքուծոյ գործելակերպը, թէ ինչպէս Ասքուած կը գործէ, եւ աւարտին իր ծրագիրը լրումին հասցնելու համար: Երկրորդ, այս հագուածը նաև մեզի կը սորվեցնէ Ասքուծոյ խօսքին նկարմամբ հնազանդ ըլլալու ու մանաւանդ ամբողջական վսպահութիւն ունենալու: Անգամ մը որ Ասքուած խոսքացաւ, ուրեմն կը կարքը: Որովհեքի հնք է Տէրը ու Դապուառը ամբողջ պիեզերքին:

Այս հագուածը ցոյց կու գայ, թէ այս պատգահարները անփեղի չեն, այլ բանի մը հետեւանքն են, ան ալ մեղքի, բայց ինչպիսի մեղքի մասին է խօսքը: Երբ մանաւանդ կը կարդանք Քրիստոսի խօսքերը, ու յաճախ կօգպագործենք արդարացնելու համար մենք զմեզ ըսելով, թէ Քրիստոս կ'ըսէ, “Ամէն մեղք պիտի ներուի”, ուրեմն Ասքուած ինչո՞ւ պիտի պարզէ, պէտք է որ ներէ: Նախ յսպակեցնենք, Ասքուած պատրաստ է ներելու, երբ այդ մեղքը կը խոսքովանուի եւ ներում կը խնդրուի անոր համար: Միւս կողմէ, Քրիստոսի խօսքը շարունակելով, Քրիստոս կ'ըսէ, “Ամէն մեղք պիտի ներուի, բացի Սուրբ Հոգիին դէմ եղած հայինութենէն”, եւ եթէ հարց գանք, ի՞նչ է Սուրբ Հոգիին դէմ եղած հայինութիւնը, ուրիշ բան չէ եթէ ոչ այն ինչ որ մեզի կը ներկայացնէ այս գլուխը, օգար ասքուածներու երթալ, անոնց առջեւ խունկ ծխել ու անոնց երկրագութիւն ընել, այլ խօսքով ուրանալ ճշմարիք Ասքուած, մերժել զինք եւ մեր հաւաքարմութիւնը ուրիշին ընծայել: Այս երեւոյթն է, որ Ասքուծոյ զայրոյթը ու բարկութիւնը կը բորբոքեցնէ, որովհեքի առիթով մը Տէրը կ'ըսէ, “Ես նախանձով Ասքուած եմ”, այսինքն՝ նախանձախնդիր ու բծախնդիր իր անուանը, եւ չի հանդուրժեր Իրեն փրուելիք փառը ուրիշին գալու:

Այսօր ալ նոյն վիճակի մէջ է մարդկութիւնը, երբ Ասքուծոյ փրուելիք փառը կու գանք ուրիշին, այս պարագային, մարդուն, դակարան ըսելու համար չարին, ինչ որ առիթով մը նոյն փորձութիւնը հրամցուց Քրիստոսին ըսելով. “Քեզի կու գամ այս բոլորը եթէ ինձի երկրագութիւն ընես ու պաշտես զիս”, եւ ի՞նչ էր Քրիստոսի պատգամանը, “Եփիս զնա, Սաքանայ, որովհեքի գրուած է, Քու Տէր Ասքուածդ պէտք է պաշտես եւ միայն Անոր ծառայես”:

Զգուշ ըլլանք, որու կ'ուզենք ծառայել: